ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-16-2-15/3 (ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/3) ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ցուցանակների տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 06.10.2016թ. N 1/82-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17.10.2016թ. ժամը 14-30-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Մ.Սարդարյանը, Ա.Մանուկյանը, Ա.Մկրտումյանը, Ա.Խաչատրյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-16-2-15/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-16-2-15/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ -ն (ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա,Շերամի փ. 51շ. 49բն)
2. «ՊԱՐՄԱ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Դավիթաշեն 3թ. 11/6 շ.)
3. Ա/Ձ Հովհաննես Մարտիրոսյանը (ք. Երևան, Մեծարենցի փ.89)

-ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-16-2-15/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին (ARMEPS) համակարգի միջոցով հայտ չեն ներկայացրել համակարգում 17.10.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

-«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի, «ՊԱՐՄԱ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Հովհաննես Մարտիրոսյանի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտ:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի, «ՊԱՐՄԱ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Հովհաննես Մարտիրոսյանի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ			Նախահաշվային գինը ՀՀ դրամ
		«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ	«ՊԱՐՄԱ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ	Ա/Ձ Հովհաննես Մարտիրոսյան	
1	Ցուցանակների տպագրություն-1	2 160 000	2 250 000	1 692 000	**1 800 000**
2	Ցուցանակների տպագրություն-2	118 800	220 000	125 400	**115 500**

*Ա/Ձ Հովհաննես Մարտիրոսյանը և «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չեն:

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ին, «ՊԱՐՄԱ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ին և Ա/Ձ Հովհաննես Մարտիրոսյանին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներ:
2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակիցների կողմից հայտերով ներկայացրած գնային առաջարկները արձանագրեց, որ 2-րդ չափաբաժնի համար «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի, «ՊԱՐՄԱ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Հովհաննես Մարտիրոսյանի կողմից ներկայացրած գները գերազանցում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը, գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել՝ 2-րդ չափաբաժնի համար հայտերով գնային առաջարկ ներկայացրած և բավարար գնահատված «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ին և Ա/Ձ Հովհաննես Մարտիրոսյանին հրավիրել գների նվազեցման համար միաժամանակյա բանակցությունների: «ՊԱՐՄԱ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով մերժել և չհրավիրել գների նվազեցման համար միաժամանակյա բանակցությունների, քանի որ «ՊԱՐՄԱ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը 2-րդ չափաբաժնի մասով առանց շահույթի գերազանցում է գնման հայտով հաստատված նախահաշվային գինը:
3. Նիստը վերսկսել՝ 2016 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը 16:00-ին և գների նվազեցման համար միաժամանակյա բանակցությունները կազմակերպել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Մ.Սարդարյան

Ա.Մանուկյան

Ա.Մկրտումյան

Ա.Խաչատրյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան